ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ Ներառական կրթության խնդիրները

Հետազոտող ուսուցիչներ՝

Վարդուհի Բաղդասարյան

Երևանի Հ.Պարոնյանի անվ. թիվ 59 հիմնական դպրոց

Նունե Հունանյան

Երևանի Հ. Հայրապետյանի անվ. թիվ 78 հիմնական դպրոց

Լիլիթ Մարտիրոսյան

Երևանի Հ.Գալստյանի անվ. թիվ 83 ավագ դպրոց

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 6

1.1 Ներառական կրթության հիմնարար փաստաթղթերը 6

1.2 Ներառական կրթության իրականացման ուղիներն ու մեթոդները 10

1.3 Դասավանդման մեթոդիկան 11

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 19

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթությունը մարդու հիմնական իրավունքն է: Ինչ է ներառական կրթությունը: Որն է ինտեգրված և ներառական կրթության միջև տարբերությունը: «Ինտեգրված» և «ներառական» տերմինները հաճախ օգտագործում են որպես փոխադարձաբար փոխարինելի, իմաստով նույն: Այնուամենայնիվ, փիլիսոփայության մեջ այդ հասկացությունների միջև հսկայական տարբերություն կա: Ինտեգրված կրթություն. հատուկ կարիքներով երեխաները հաճախում են հանրակրթական դպրոց (այսինքն՝ կենտրոնում է հենց հաճախելիության հարցը): Ներառական կրթություն. խոսքը հենց հանրակրթական դպրոցներում հատուկ կարիքներով երեխաների ուսուցման արդյունավետության մասին է (ամբողջ ուշադրությունը՝ ուսուցման որակին):

Աշխատանքում փորձել ենք գտնել մի շարք հարցերի պատասխաններ, բացատրել «ներառական կրթություն» հասկացությունը, ինչով է այն տարբեվում «հատուկ կրթությունից», որոնք են խնդիրները և ինչ մեթոդներով է իրականացվում ներառական կրթությունը ՀՀ-ում:

Ներառական ուսուցման ներմուծման հարցը բավական լուրջ քայլ է, որին ունակ եղան շատ երկրներ: 1960թ. որոշ երկրներ, մասնավորապես հյուսիսային երկրները, սկսեցին կրթական համակարգերի զարգացումը, որոնցում ուսուցանում էին բազմաթիվ երեխաներ, և որտեղ երեխա - հաշմանդամները սովորում էին առողջ երեխաների հետ: Շատ երկրներ հետևեցին նրանց օրինակին, թեպետ ավելի մեղմ ձևով՝ սկսում էին ընդհանուր դպրոցում սովորող երեխաների շրջանակն ընդլայնելուց: Նախկինում առանձնահատուկ պայմանների կարիքներ ունեցողները մեկուսացված էին հասարակությունից, կրթական համակարգում կար որոշակի խտրականություն նրանց հանդեպ, սակայն ժամանակի ընթացում ամեն ինչ փոխվում է :

Հայաստանի Հանրապետությունում ներառական կրթության ոլորտում առաջին քայլի սկիզբը դրվել է 2001 թվականին՝ ՀՀ ԿԳ նախարարության և «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության միջև կնքված համաձայնագրով, որը լավագույն օրինակ էր միջազգային ու տեղական հասարակական

կազմակերպությունների արդյունավետ համագործակցության: Հայաստանի Հանրապետությունը զգալի առաջընթաց է ապահովել օրենսդրական դաշտի կատարելագործման առումով: Ներկայումս այն հնարավորություն է տալիս ավելի արդյունավետ կազմակերպել ներառական կրթությունը նախադպրոցական հաստատություններում և հանրակրթական դպրոցներում: 2005 թ. սեպտեմբերի 1-ին ուժի մեջ մտավ «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքը: Դրանով պետականորեն ճանաչվեց և ամրագրվեց նաև ներառական կրթությունը Հայաստանում: Սակայն մինչ այդ «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպությունից հինգ տարի պահանջվեց երևանի 5 դպրոցներում այն իրականացնելու և որպես հաջողված փորձ ՀՀ կառավարությանը ներկայացնելու համար:

ՀՀ-ում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը կարգավորվում և պաշտպանվում է «Կրթության մասին» ՀՀ օրենքով և մի շարք այլ նորմատիվ իրավական ակտերով:Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին օրենսդրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, Ընտանեկան օրենսգիրքը, Կրթության մասին, Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին, Երեխայի իրավունքների մասին օրենքները, այլ օրենքներ և իրավական ակտերը: Սույն օրենքներում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձ՝ անձ, որի ֆիզիկական և մտավոր, հոգեկան զարգացման առանձնահատկությունները խոչընդոտում են կրթական ծրագրերի յուրացմանը՝ առանց կրթության առանձնահատուկ պայմանների
- կրթության առանձնահատուկ պայմաններ՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձի կրթության և ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ հատուկ կրթական ծրագրեր և ուսուցման մեթոդներ, ուսուցման անհատական տեխնիկական միջոցներ, կենսագործունեության միջավայր, մանկավարժական, սոցիալական ծառայություններ, առանց որոնց կրթության

առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց հանրակրթական և մասնագիտական կրթական ծրագրերի յուրացումը դժվար է կամ անհնարին:

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1.1 Ներառական կրթության հիմնարար փաստաթղթերը

Օրենսդրությունը կարևոր դեր է խաղում անցման շրջանում: Այն կատարում է չորս հիմնական ֆունկցիաներ.

• Տալիս է սկզբունքների և իրավունքների հստակ սահմանում՝ ներառման գործընթացի շրջանակները ուրվագծելու համար

• Բարեփոխում է գոյություն ունեցող համակարգի այն տարրերը, որոնք հանդիսանում են զգալի խոչընդոտ ներառման ճանապարհին (օրինակ՝ հատուկ խմբերից, ինչպիսիք են երեխա-հաշմանդամ կամ լեզվական խմբերը, երեխաների հաճախումը հարևանությամբ գտնվող դպրոցներ արգելող քաղաքականություն)

• Հիմնարար ներառական պրակտիկայի ամրագրում (օրինակ, պահանջ դպրոցներին իրենց շրջապատի բոլոր երեխաներին ուսուցանելու)

• Կրթության ողջ համակարգում ներառման գործընթացին նպաստող ընթացակարգերի և գործունեության կիրառում (օրինակ, ուսումնական ճկուն պլանի ստեղծում կամ հասարակական ղեկավարման կիրառում):

Գոյություն ունեն ղեկավարման մի քանի սկզբունքներ, որոնք վերը նշված խնդիրները դարձնում են լուծելի.

• Պետություններում առկա է միտում զարգացման գործընթացում ներկայացնել օրենսդրությունը տարբեր դիրքերից: Ինչքան զգալի են գործող օրենսդրության ստեղծած արգելքները դեպի ինտեգրացում տանող ճանապարհ, այնքան հրատապ է տվյալ օրենսդրությունը կարիք զգում բարեփոխման, սակայն օրենսդրության փոփոխությունը ներառական գործընթացում չպետք է առաջին քայլը լինի: Այն պետք է իրականացվի մի շարք նախապատրաստական փուլերից հետո, այն բանից հետո,երբ ներառման հարցի շուրջ սկսվել են քննարկումները և հնչում են սկսվող ներառական շարժման արձագանքները:

• Վաղ փուլերում պետք չէ ձգտել մանրակրկիտ օրենսդրության ստեղծման, որը ժամանակի ընթացքում կդառնա հետագա զարգացման ճանապարհի փորձաքար: Չիլիում օրինակ՝ օրենսդրությամբ ամրագրվել էր ներառման 4 մակարդակ: Սակայն այսօր ակնհայտ է, որ դրանով ստեղծվեց մի իրավիճակ, որի դեպքում այն

ուսանողները, որոնք հասցրել էին գտնվել ներառման զարգացման վերին մակարդակում, նրանց կրթություն ստանալը սահմանափակվեց այն պատճառով, որ զարգացած էր դեռևս միայն առաջին աստիճանը: Նման չարիքից խուսափելու համար հարկավոր է սկսել ընդհանուր սկզբունքներ և ներառման ճանապարհի խոչընդոտների վերացում ընձեռող գլխավոր օրենսդրությունից: Փորձերը և զարգացման այլ գործոնները կարող են տեղ ունենալ և անհրաժեշտության դեպքում մանրամասն ձևակերպվել հետագա օրենսդրություններում:

• Կարևոր է համարվում նաև գործընթացի վաղ փուլերում գոյություն ունեցող օրենսդրության վերանայումը այն խոչընդոտների բացահայտման համար, որոնք ինքն է դնում ներառական գործընթացի ճանապարհին: Արդյունաբերական շատ երկրներում կա օրենսդրությամբ խրախուսվող միտում՝ կրթության հետ կապված խնդիրներ ունեցող երեխաներին ուղարկել առանձնացված հատուկ դպրոցներ համապատասխան կրթություն ստանալու համար: Տվյալ դեպքում առաջին քայլը դեպի ներառում պետք է լինի այդ վիճակի փոփոխությունը:

Նիդեռլանդները պատմականորեն եղել են Արևմտյան Եվրոպայի ամենամեկուսացած երկրներից մեկը, հատուկ և ընդհանուր կրթության միջև վերը թվարկված բոլոր սահմանազատումներով: Սակայն վերջին տարիներին կառավարությունը հաստատեց «Նորից Միասին Դպրոց» ներառական ծրագիրը, որի նպատակն էր հանդիսանում ներառական պրակտիկայի զարգացումը, կոնսենսուսի կառուցումը, ուսուցիչների կատարելագործումը, առկա խոչընդոտների և հնարավորությունների իրավիճակային վերլուծությունը: Այդ գործընթացի մի մասն էր օրենսդրության բարեփոխումը: Հատուկ կրթությունը մտցվեց տարրական հանրակրթական համակարգի շրջանակներ, ստեղծվեց դրամական միջոցների փոխանցման համակարգ ընդհանուր և հատուկ դպրոցների խմբերի համար, որպեսզի նրանք տեղերում կարողանան որոշել կրթության կարիքներով ուսանողների համար հատուկ և սովորական դպրոցների առաջնահերթությունները: Այնպես որ լրիվ ներառումը պարտադիր չէ, և չնայած այդ նոր համակարգի զարգացումը զուրկ չէ որոշակի պրոբլեմներից, համենայն դեպս ստեղծված է աշխատանքային համակարգ, որը նշանակալիորեն հեշտացնում է փորձերի անցկացումը ներառական կրթության զարգացման գործընթացում: Ներառական

կրթության համար խոշոր նշանակություն ունեն մարդասիրական իրավունքի միջազգային նորմերը: Դրանք են՝

- 1971թ-ին ընդունված՝Մտավոր հետամնաց երեխաների իրավունքների մասին դեկլարացիան՝
- 1975-ին ընդունված «Հաշմանդամների իրավունքների մասին դեկլարացիան»
- 1989թ-ին ընդունված «Երեխաների իրավունքների մասին դեկլարացիան»
- 1948թ-ին ընդունված «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը», որտեղ խոսվում էր յուրաքանչյուր մարդու կրթության իրավունքի մասին
- 1990թ-ին ընդունված Ջոմտիեն-/Թայլանդ/ վերահաստատվեց «Կրթություն բոլորի համար» օրենքը՝ անկախ նրանց անհատական տարբերություններից՝ հենված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի և երեխաների իրավունքների մասին կոնվենցիայի:
- 1993թ-ին ընդունված ՄԱԿ-ի կոնվենցիան հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին /Հաշմանդամների համար հավասար իրավունքների ապահովման ստանդարտ կանոնների մշակում
- 1994թ-ին ընդունված Սալամանկայի հռչակագիրը (Իսպանիահունիսի 7-10) մասնակցում էր 25միջազգային կազմակերպություն Սալամանկայի հռչակագիրը և Գործողությունների շրջանակները միջազգային մակարդակում ներառական կրթության առավել հանգամանալի հրահանգ է: Փաստաթուղթն ընդունվել է Սալամանկայի համաշխարհային կոնֆերանսում՝ կազմակերպված 1994 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի հատուկ պահանջմունքներով անձանց համար կրթության հարցերի բաժնի կողմից՝ կրթություն բոլորի համար (ԿԲՀ) ստեղծման գաղափարը պաշտպանելու նպատակով: Կոնֆերանսում քննարկվեցին ներառական կրթության զարգացման համար անհրաժեշտ քաղաքականության մեջ փոփոխությունների հարցերը: Մասնակիցները զբաղված էին այնպիսի եղանակների մշակմամբ, որոնք կստիպեն դպրոցին ծառայելու բոլոր երեխաներին, հատկապես հատուկ կրթական կարիքներ ունեցողներին, քան առանձին հաստատությունների ստեղծման հարցերով: Հաջորդ մեջբերումները արված են Սալամանկայի հռչակագրի երկրորդ մասից: Նրանում հստակ հայտարարվում է, որ յուրաքանչյուր երեխա ունի իր

բացառիկ ուսումնական պահանջմունքները, ինչպես նաև բնակության վայրի դպրոց հաճախելու իրավունք.

- անհրաժեշտ է մշակել կրթության համակարգեր և իրականացնել կրթական ծրագրերն այնպես, որպեսզի ուշադրություն դարձվի այդ առանձնահատկությունների և պահանջմունքների լայն բազմազանությանը:
- կրթության ասպարեզում հատուկ պահանջմունքներ ունեցող անձինք պետք է սովորական դպրոցներում ուսուցման հնարավորություն ունենան, որոնք պետք է նրանց համար ստեղծեն նախ և առաջ դեպի երեխաները կողմնորոշված մանկավարժական մեթոդների հիման վրա պայմաններ[a] այդ պահանջմունքները բավարարելու նպատակով:

2000-ին ընդունված Դակարում/Սենեգալ /նույնպես կրթության հավասար իրավունքների հռչակագիրը: Հայաստանը ՄԱԿ-ի հռչակագրին միացել է 1993-ին , իսկ 1996թ-ին ընդունվել է «Երեխաների իրավունքների մասին» ՀՀ-ն օրենքը , 2005-ի մայիսի 25-ին «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքը:Այս օրենքը կարգավորում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց իրենց ընդունակություններին և կարողություններին համապատասխան կրթություն ստանալու, իրավական, կազմակերպական և ֆինանսական հիմքերը, ինչպես նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության կազմակերպման բնագավառում հարաբերությունների մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները: Հայաստանում ներառական կրթության ոլորտում առաջին քայլի սկիզբը դրվել է 2001թվականին՝ՀՀ կրթության և գիտության նախարարության և «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության միջև կնքված համաձայնագրով: Գործընթացն իր շարունակությունը ստացավ 2003 թվականին ՀՀ ԿԳՆ-ի , դանիական «Առաքելություն Արևելք» կազմակերպության և «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության միջև կնքված համաձայնագրով, որի շրջանակներում մշակվել են հաշմանդամ և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության մատչելիության և կրթության մեջ նրանց լիարժեք մասնակցության մեխանիզմներ:Նաև մշակվել և հաստատվել են «Թեթև , չափավոր և ծանր մտավոր

հետամնացություն ունեցող երեխաների հատուկ կրթության չափորոշիչները», ներառական կրթության հայեցակարգը, ուսուցիչների վերապատրաստման փաթեթը և կրթական հատուկ կարիքի գնահատման գործիքները:

1.2 Ներառական կրթության իրականացման ուղիներն ու մեթոդները

Այսօր շատ երկրներում,այդ թվում նաև Հայաստանում,իրագործվում է ներառական կրթության մոդելը: Հայաստանում բավականին տարածում է գտել ներառական կրթությունը: Հատուկ մասնագետներ՝ սոցիալական աշխատողներ, հոգեբաններ, ծավալուն աշխատանք են տանում այս ասպարեզում. նրանք աշխատում են և հատուկ կարիքներով երեխաների, և նրանց ծնողների հետ և ի վերջում հասնում նրան, որ երեխան սկսում է հաճախել հանրակրթական դպրոց, ինչպես նաև աշխատում են պայմանական առողջ երեխաների հետ, որպեսզի նրանք խտրականություն չդնեն իրենց ու հատուկ կարիքներով երեխաների միջև: ԿԱՊԿՈ երեխաների կրթությունը ծնողների ընտրությամբ կարող է իրականացվել ինչպես ընդհանուր հանրակրթական, այնպես էլ հատուկ հաստատություններում՝ հատուկ ծրագրերով: Ներառական կրթության քաղաքականության հիմքում երեխայակենտրոն մանկավարժությունն է: Ներառական կրթությունը ենթադրում է հատուկ ծրագրերի մշակում և ներդրում:

Հաշմանդամ երեխաների ներգրավումը հանրության մեջ ենթադրում է նպատակասլաց գործունեություն, որը բաղկացած է մի քանի փուլերից՝

I փուլ- ՍԻԳՐԵԳԱՑԻԱ - մասնատում փոքր խմբերի, նպատակը՝ դիագնոստիկ աշխատանք ըստ տարիքի, արատի բնույթի, արատի աստիճանի:

II փուլ- ԻՆՏԵԳՐԱՑԻԱ - մտցնել միմյանց տարբեր խմբեր, նպատակը՝ կանխարգելում, վերականգնում, շփման դժվարությունների հաղթահարում: Օրինակ՝ հանրակրթական դպրոցներում բացել հատուկ դասարաններ (Շվեդիա)

III փուլ- ԻՆԿԼՈՒԶԻԱ (ՆԵՐԱՌՈՒՄ) - ներառումը ապահովում է լիարժեք զարգացում: Օրինակ՝ երեխային ընդգրկել սովորական դպրոցում, սովորական դասարանում:

Եվ այսպես, վերը նշվածից պարզ է դառնում, որ սահմանապակ կարողություններով երեխայի հետ աշխատանքները պետք է իրականացվեն տարբեր

ուղղություններով, համապատասխան երեխայի գործունեությանն ու մերձակա զարգացման գոտուն: 90-ական թթ. ներառական կրթության հարցը հայտնվեց ուշադրության կենտրոնում: Ուսումնասիրվեցին Հարավային Աֆրիկայում և Հարաարևելյան Ասիայում ինտեգրված կրթության ծրագրերի աշխատանքի արդյունքի փաստաթղթերը: Եվ կրթության նախարարություններում ընդունվեցին աշխատանքի ներառական մեթոդներ՝ որպես այլընտրանք հատուկ դպրոցներին: Այսօր շատ կրթության նախարարություններում ներառական կրթությունը դիտարկվում է որպես ԿԲՀ դպրոցների կատարելագործման և նախաձեռնությունների աշխատանքի մաս:

1.3 Դասավանդման մեթոդիկան

Ուսուցման մեխանիկական մեթոդներին սովոր ուսուցիչների համար գուցե դժվար լինի աշխատել առավել ակտիվ մեթոդներով[a] կողմնորոշված առաջին դեպի երեխան: Դասավանդման մեթոդիկայում փոփոխությունները կարող են ներառել. դասասենյակում վերադասավորություն, որպեսզի երեխաները կարողանան աշխատել փոքր խմբերով, բարեկամական հարաբերությունների զարգացում, որպեսզի լավ սովորող աշակերտներն աշխատեն ուսուցման դժվարություններ ունեցողների հետ, խաղերի, նոր բառերի համար առկա ձեռնարկների օգտագործում: Ուսուցիչները պետք է հնարավորություն ունենան փորձել նոր մեթոդներ,հաղորդակից դարձնել գաղափարներին և ուսումնասիրել այլ մեթոդիկա օգտագործող ուսուցիչների աշխատանքները: Ուսուցիչներին անհրաժեշտ է մատչելի տեղեկատվություն միջազգային փաստաթղթերի մասին: Տեղեկատվությունը, թե ինչպես են աշխատում նման պայմաններում մյուս ուսուցիչները, օգնում է մանկավարժներին վերլուծելու սեփական գործողությունները, նրանք ձգտում են պրակտիկայում փորձել նոր գաղափարներ:

Ուսուցիչը կարող է բարձրացնել դասասենյակի ներառումը՝ օգտագործելով երեխային կողմնորոշված ակտիվ մեթոդներ : Այդ մեթոդները կարող են.

- օգնել բոլոր երեխաներին խաղալ, սովորել միասին և կիսել պատասխանատվությունը
- պակասեցնել ուսուցման ժամանակ դժվարությունների ներգործությունը

- թույլ չտալ այդ դժվարությունները զարգանան
- հայտնաբերել այն երեխաներին,որոնց հաճախ կոչում են ՝չհասցնողներ՝, թեպետ ըստ էության դրանք հատուկ կարիքներով երեխաներ են
- լուծել վարքագծի խնդիրները
- ուսումնական պլանում ակտիվացնել առօրյա կյանքում օգտագործվող հմտություններ
- ուսուցումը հետաքրքրաշարժ դարձնել
- անցած նյութը կապել դպրոցում և տանը իրավիճակների հետ
- փոփոխել ուսուցման մեթոդները և արագությունը՝ երեխաների հետաքրքրությունը պահպանելու համար և հնարավորություն տալ նրանց սովորել անհատական արագությամբ
- լավացնել դասարանում փոխհարաբերությունները
- օգնել ուսուցչին կատարելագործելու իր հմտությունները:

«Երեխան երեխային» սկզբունքով աշխատանքի մեթոդներ

Երեխաների իրենցից ներկայացնում են կրթության մեջ արժեքավոր և հաճախ չպահանջված ռեսուրս: Նրանք ավելի հանդուրժող են հաշմանդամության նկատմամբ, քան իրենց ուսուցիչներն ու ծնողները: «Երեխան երեխային» սկզբունքով մոտեցումը շատ արդյունավետ միջոց է երեխաների մասնակցությունը համախմբելու համար: Երեխաները շատ ակտիվ են լինում իրենց համայնքում հաշմանդամության նկատմամբ բացասական վերաբերմունքը հաղթահարելու համար՝ հայտնաբերելով դպրոցից դուրս մնացած երեխաներին, օգնելով հատուկ կարիքներով երեխաներին հասնելու դպրոց: Հատուկ կարիքներով երեխաներին խմբերում միավորվել կարողանալը նրանց հնարավորություն է կտա դրական ինքնագնահատական զարգացնել, ծանոթանալ հատուկ կարիքներով մարդկանց թվից դերային մոդելներին, կիսել հանդիպած դժվարությունները հաղթահարելու իրենց փորձը: Խուլ երեխաներն այսպես պետք է կատարելագործեն ժեստերի լեզվով շփման հմտությունները: Այդպիսի խմբերի կազմակերպման մեջ կարևոր է հատուկ կարիքներով մեծահասակների և նրանց ընկերակցությունների օգնությունը:

Համայնքի մասնակցությունը ներառական կրթությանը

Համայնքի բազմաթիվ անդամներ կարող են իրենց ներդրումն ունենալ ներառական կրթության զարգացման մեջ. ավագանին, հոգևորականությունը, ծնողները, հատուկ կարիքներով մեծահասակները: Նման մարդկային ռեսուրսների օգտագործումը օգնում է զարգացնելու կապերը դպրոցների, ընտանիքների, համայնքների միջև: Այս ամենի նպատակն է ամբողջությամբ ստեղծել ներառական հասարակության:

Ծնողների ներգրավումը այս գործընթացին

Հատուկ կարիքներով երեխաների ծնողները հենց իրենց՝ երեխաների, կրթություն ստանալու իրավունքի պաշտպաններն են: Նրանք արժանի են աջակցության իրենց նպատակներին հասնելու համար: Շատ ծնողներ նույնիսկ տեղյակ չեն, որ հատուկ կարիքներով իրենց երեխաները իրավունք ունեն ըստ բնակության վայրի դպրոց հաճախելու: Ծնողների նպատակները ոչ միշտ են պատասխանում նրանց երեխաների կարիքներին ու հետաքրքրություններին: Ծնողներին կարող է օգնություն անհրաժեշտ լինել՝ խմբերում միավորվելու և կրթության մեջ բացառող պրակտիկայի դեմ պայքարելու համար:

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել այն բանին, որ երեխաները չպետք է երկար ժամանակ նստեն խաչված ոտքերով, քանի որ դա անհարմար է, վատ նրան ֆիզիկական զարգացման համար և, հետևաբար, վատացնում է ուշադրությունը: Անհրաժեշտ է նստելու համար օգտագործել տարբեր օժանդակ միջոցներ՝ բարձեր, աթոռներ, փուչիկներով պարկեր և այլն:

Հատուկ կարիքներով երեխաների խմբերի կազմում

Շատ օգտակար է, որպեսզի հատուկ կարիքներով երեխաները կարողանան միավորվել խմբերում:Դա նրանց հնարավորություն է տալիս դրական ինքնագնահատական զարգացնել,կիսել հանդիպած դժվարությունները հաղթահարելու իրենց փորձը: Խուլ երեխաներն այսպես պետք է կատարելագործեն ժեստերի լեզվով շփման հմտությունները: Այդպիսի խմբերի կազմակերպման մեջ կարևոր է հատուկ կարիքներով մեծահասակների և նրանց ընկերակցությունների օգնությունը:

Ներառական կրթությունը պահանջում է փոփոխություններ թե՞ կրթական համակարգում,թե երեխաների ունակությունների և պահանջմունքների

տարբերությունների ընդունում: Ներառական կրթությունն իրականացնելիս անհրաշեշտ է մի շարք պայմանների ստեղծում՝

- ճանապարհների վիճակի լավացում
- բազկաթոռ-անվասայլակներ
- ձեռնասայլակներ
- մեծահասակների կողմից անվտանգության վերահսկողություն
- դպրոցի շենքի շինարարության ժամանակ ջանալ բավարարվել թեքահարթակների հիմնախնդիրները
- դռները պետք է լայն լինեն, այնպես որ, անհրաժեշտության դեպքում դրանցով անցնի բազկաթոռ-անվասայլակը, պետք է հեշտորեն բացվեն և ունենան բռնակներ
- դասասենյակներում նստարանները չպետք է սահմանափակեն երեխայի շարժումները և նրան անհրաժեշտ հենարան ներկայացնեն: Որոշ երեխաների համար ավելի լավ է նստել զույգերով, ուստի անհրաժեշտ է թույլ տալ նրանց նստել ընկերներից մեկի հետ
- ուսուցիչները պետք է սովորեն լսել, հետևողական, համբերատար լինել, հարգանքով վերաբերվել յուրաքանչյուր երեխայի ուսուցման անհատական ռճին և այլն:

Կանոնավոր ընդմիջումներ

Զարգացման խանգարումներով և հապաղումով երեխաների մեծ մասի աշխատանքը պետք է լինի կառուցվածքային և միաժամանակ ճկուն: Դրա համար անհրաժեշտ է կանոնավոր ընդմիջումներ անել: Դա կօգնի նրանց պահպանել կենտրոնացվածությունը,համառությունը,այսպիսով նրանք ավելի շատ հնարավորություններ կունենան բոլորի հետ հավասար ծավալով կրթություն ստանալու: Տեղաշարժման և կոորդինացիայի դժվարություններով երեխաներին գուցե օգտակար կլինի դիրքի կանոնավոր փոփոխությունը: Դասավանդման ճկուն մեթոդիկան պետք է հնարավորություն տա երեխաներին ընդմիջումներ անել և, թերևս, օրվա որոշակի ժամերի գործունեությունը փոխել ավելի հանգիստ ձևերի:

Լսել և ականջ դնել

Լսողական խնդիրներով երեխաների համար ներառումը բարձրացնելու նպատակով պետք է.

- երեխաներին նստեցնել շրջանաձև, որպեսզի նրանք կարողանան տեսնել իրար դեմքեր: Դա կօգնի նրանց լսել և հասկանալ
- երեխաները պետք է լավ տեսնեն ուսուցչի դեմքը, ոչինչ չպետք է թաքցնի այն նրանցից
- խոսողի դեմքը երբեք չպետք է ստվերում լինի, պետք է կանգնել դեմքով դեպի լույսի աղբյուրը (օրինակ՝ դեպի պատուհանը), որպեսզի շրթունքներով կարդալը որքան հնարավոր է հեշտ լինի
- երեխաների ուշադրությունը հրավիրեք նախքան խոսել սկսելը
- օգտագործեք դիտանյութեր՝ նկարներ, առարկաներ, հանգուցային բառեր՝ որպես դասին նախաբան
- նվազագույնի հասցրեք կողմնակի աղմուկները և այլն:

Այս ամենը պետք կգա նաև տեսողության և/կամ ուսուցման դժվարություններ ունեցողներին և ընդհանրապես բոլոր երեխաներին: Ի լրումն ամենի.

- աշակերտները պետք է նստեն այնտեղ, որտեղից նրանք ամենալավն են տեսնում (լսում)
- գրատախտակին պետք է գրել հստակ, խոշոր ձեռագրով
- հանձնարարությունները բարձրաձայն կարդալ.
- ասեք, թե ինչ է պատկերված դիտանյութերում (օրինակ՝ «ձախ կողմում նկարված է...» կամ «ներքևում գտնվում է...»)
- նվազագույնի հասցնել կամ վերացնել կողմնակի աղմուկները, որպեսզի երեխաները կարողանան ամբողջությամբ կենտրոնանալ ուսուցչի խոսքի վրա և չշեղվեն կողմնակի ձայների վրա
- տալ երեխաներին շոշափեն դիտանյութերը, եթե նրանք չեն տեսնում: Օրինակ՝ քարտեզների վրայի գծերը կարող են առանձնացվել կարթաթելի օգնությամբ:

Վատ տեսողությամբ (սուր բարդություններով) երեխաներին կօգնեն.

- խոշոր տառատեսակը

- խոշորացույցը
- լուսավորության խնամքով օգտագործումը
- ընթերցանության համար ստենդները կամ գրակալները
- կահույքի, դասագրքերի և այլնի գունավոր կոդավորումը և այլն:

Ցանկացած ուսումնական պրոցեսում կարևոր է, որ ուսուցիչն ընկալի յուրաքանչյուր երեխային որպես անհատականությունª իր ընդունակությունների, հետաքրքրությունների, պահանջմունքների հետ մեկտեղ: Ուսուցիչները գտնվում են իրենց աշակերտների հետ ամենօրյա շփման մեջ, հետևաբար, կարող են նկատել նրանցից յուրաքանչյուրի զարգացման ուղենիշները: Բոլոր երեխաները զարգանում են տարբեր կերպով, և զարգացման մի ասպեկտի հապաղումը անհրաժեշտ է մեկ այլ ասպեկտի առաջընթացի համար: Եթե ուսուցումը երեխայի հնարավորությունների համեմատությամբ չափազանց առաջադիմական է, նա կարող է հետ մնալ: Ուսուցման մեթոդների ու արագության փոփոխությունը կօգնի յուրաքանչյուր երեխային սովորել իրեն բնորոշ արագությամբ: Որոշելով զարգացման զգալի հապաղումը՝ մենք կարող ենք որոշել նաև հատուկ պահանջմունքները: Կարելի է տալ հարցեր՝ կապված երեխայի տեղաշարժվելու և շփվելու, ընկալելու և մտածելու ընդունակության, ճարպկության և կոորդինացիայի հետ:Երեխայի շփման և ընկմալման պահանջմունքների մասին չիմացությունը հաճախ հանգեցնում է փոխադարձ անհասկացողության, շրջապատի մարդկանցից երեխայի մեկուսանալու: Շփման և/կամ ընկալման խնդիրներով երեխաներին հաճախ համարում են մտավոր հետամնաց, և այս ախտորոշումը կարող է հանգեցնել զրկանքների և, արդյունքում, երեխայի մեկուսացման: Ուստի շատ կարևոր է փորձել հասկանալ և բավարարել այդ պահանջմունքները որքան հնարավոր է վաղª հետագայում բացասական վերաբերմունքից և վարքագծից խուսափելու համար:

Խաղային մեթոդ

Խաղը շատ կարևոր է երեխաների ուսուցման մեջ: Այն նրանց հնարավորություն է տալիս ճանաչել աշխարհը, նպաստում է նրանց ինքնարտահայտմանը, հմտությունների զարգացմանը: Այն, թե երեխաներն ինչպես

են սովորում, ուսուցիչներին հնարավորություն է տալիս իմանալ նրանց ամենատարբեր հմտությունները , որոշել՝ ինչպես են նրանք սովորում:

Գործողություններ Ըստ տարիքի Բարձր/ ցածր Մեկնաբանություններ

Խաղեր/սպորտ

.Քայլք և վազք

.Գնդակը նետել,բռնել

Միասին խաղեր

. Խաղընկերներ

. Յուրաքանչյուր երեխայի դեհը խմբում

.Կենտրոնացվածություն

. Վստահություն

. Փոխգործողություն

. Հերթ

. Հաղթանակներ և պարտություններ

Ստեղծագործական խաղ

. Նկարել, ներկել

. Երաժշտություն, պար

. Դերային խաղ

Մենակ խաղ

. Երևակայություն

. Կոնստրուկտորներ

Ներառական կրթության բոլոր ջանքերը հիմնված են իրավական գաղափարախոսության վրա. եթե մենք դա անում ենք խղճահարությունից կամ բարեգործությունից մղված՝ չենք կարող անհրաժեշտ արդյունքներ ստանալ: Բոլոր երեխաները կարող են սովորել. մենք պետք է նրանց ուսուցման համար ստեղծենք հարմար պայմաններ:Կան բազմաթիվ հաստատություններ, որոնք աշխատում են ի շահ հատուկ կարիքներով երեխաների, և նրանք իրենց գործը լավ են անում: Եթե ներառական կրթության մեթոդները մշակված են հաստատությունների ողջ համակարգի համար, այդժամ յուրաքանչյուր երեխա կգտնի կրթության համար տեղը, ու այդ տեղը կլինի նրանց համար լավագույն տեղը: Սկզբունքները հույժ

կարևոր են, քանի որ դրանք օգնում են այդ ուղղությամբ աշխատող մարդկանց իրենց աշխատանքի գնահատական տալ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներառական կրթության անցումը չի կարող տեղի ունենալ մեկ ակնթարթում: Անհրաժեշտ է հիմնավորված փոփոխությունների գործընթաց,որը պետք է դիտարկել որպես գոյություն ունեցող համակարգի ընդլայնում: Առաջնահերթ փոփոխությունները հանգում են կարծիքների բախման, հաշվառման, օրենսդրության բարեփոխման, տեղական ծրագրերի աջակցման: Փոփոխությունների գործընթացն ինքնին պահանջում է ֆինանսական, մարդկային ռեսուրսներ: Կարևորը դրանց ճիշտ տեղաբաշխումն է և աշխատանքների ճիշտ կազմակեպումը: Թեև Հայաստանը միակն է տարածաշրջանում, որն իրականացնում է ներառական կրթություն,սակայն դեռ շատ բացեր, խնդիրներ կան այս ոլորտում: Առանց այդ խնդիրների լուծման անհնարին կլինի ներառական կրթության ճիշտ կազմակերպումը: Այդ խնդիրներն են՝

- մեր հասարակության հակասական վերաբերմունքը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հանդեպ: Քանի դեռ մեր հասարակությունը չի փոխել իր վերաբերմուքը և չի սկսել նմանատիպ խնդիրներով երեխաներին վերաբերվել «հավասարը հավասարին» սկզբունքով, այլ ոչ թե անտարբերություն դրսևորելով կամ լավագույն դեպքում՝ խղճահարություն:
- Մյուս խնդիրը հանրակրթական հաստատությունում համապատասխան որակավորում ունեցող մասնագետների բացակայությունը, ԿԱՊԿՈՒ երեխաների համար համապատասխան գույքի, թեքահարթակների, ուսումնական ծրագրերի բացակայությունը:
- Պետական աջակցության , ֆինանսավորման բացը և այլն:

Մեր աշխատանքի շրջանակներում մենք իրականացրեցինք մանկավարժական գիտափորձ,որի արդյունքները վկայում են, որ հանրակրթական հաստատություններում ներառական ուսուցումն իրականացվում է արդի մեթոդներով, սակայն այդ մեթոդները և միջոցները դեռևս քիչ պայմաններ են,որպեսզի ճիշտ կազմակերպվի ներառական կրթության գործընթացը, չկա ծրագիր, որն անհրաժեշտ է ԿԱՊԿՈՒ երեխայի ուսուցումը ճիշտ կազմակեպել: Թեև մեր կողմից անցկացրած սոցիալական հարցմանը մասնակից ծնողներից շատերը քաջատեղյակ էին «ներառական կրթություն» հասկացությանը, սակայն մեր

հասարակության մեջ կա դեռ վերջինիս մասին տեղեկացվածության ցածր մակարդակ: Անհրաժեշտ են նոր մշակված մեթոդներ և դրանց իրականացման ուղիներ՝բարձրացնելու ներառական կրթության արդյունավետությունը:

Հիմնվելով առաջատար մասնագետների կողմից մշակված դասական,ավանդական մեթոդների վրա՝ մենք փորձել ենք մշակել ներառական կրթությունն ավելի արդյունավետ կազմակերպելու միջոցներ, ուղիներ և ներկայացրել ենք առկա խնդիրների պատասխանները: Այսպիսով, անհրաժեշտ է.

1.Ներառական կրթության ճիշտ կազմակերպման համար համապատասխան միջավայրի ապահովում: Դասարանում պետք է տիրի այնպիսի դրական մթնոլորտ,որը կխթանի սովորողի՝ մասնավորապես ԿԱՊԿՈՒ երեխայի, ակտիվ մասնակցությանը ուսումնական գործընթացին: Համապատասխան բազմամասնագիտական թիմի պարտադիր առկայություն: Այն է՝ լոգոպեդ, շտկող մանկավարժ, հատուկ հոգեբան, հատուկ մանկավարժ, սոցիալական աշխատող, ովքեր պետք է ունենան համապատասխան որակավորում և պարտադիր աշխատանքային փորձ: Ցանկալի նաև նմանատիպ մասնագետների վերապատրաստում արտերկրում:

Օրենսդրական դաշտի կատարելագործում, մասնավորապես՝ ԿԱՊԿՈՒ երեխաների հոտ աշխատող մանկավարժների համար բացի աշխատավարձից լրացուցիչ հավելումների վճարում, առնվազն 3 տարին մեկ վերապատրաստում համապատասխան ոլորտում:

2.Ներառական կրթություն իրականացնող հաստատություններում գույքը տրամադրելիս հաշվի առնել զարգացման տարբեր խանգարումներ ունեցող երեխայի հարմարվածությունը, ինչպես նաև այդ երեխաների հոգեֆիզիկական զարգացման առանձնահատկությունները:

3.Մշակելառարկայական, գիտամեթոդական ձեռնարկներ, կատարելագործել առկա ուսումնական ծրագրերը՝ հաշվի առնելով առաջավոր երկրների փորձը:

4.Պայմանականորեն առողջ երեխաների, նրանց ծնողների հետ պարբերաբար անցկացնել սեմինար-խորհրդատվություններ ԿԱՊԿՈՒ երեխայի հետ համատեղ ուսուցում կազմակերպելու վերաբերյալ: Իրականացնել ներառական կրթություն այն ուսումնական հաստատություններում, որոնք ապահովված են ազատ

տեղաշարժվելու հարմարություններով (թեքահարթակների, անվասայլակների առկայություն), ինչպես նաև խորհուրդ է տրվում դասընթացները կազմակերպել առաջին հարկում: Տնօրենի կողմից պետք է նշանակվեն համապատասխան անձիք,ովքեր արտակարգ իրավիճակների ժամանակ կկազմակերպեն նմանատիպ երեխաների տարհանումը դպրոցից:

5.Կարևորվում է նաև դիդակտիկ նյութերի առկայությունը, խաղային մեթոդների ներդրումը ուսումնական գործընթացում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Հովսեփյան Ա.,Տողանյան Ն.,ՀՀ ԿԳՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ, «Մտավոր խնդիրներ ունեցող սովորողների հետ աշխատող հատուկ մանկավարժի ուղեցույց», 2008:

2.Բաց Ֆայլ Ներառական կրթության մասին, 2004:

3.Թորոսյան Կ., ՀՀ ԿԳՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ «ՆԱԽԱՇԱՎԻՂ»,2012:

4.Բաբայան Լ.,Վարդանյան Ա.,Հակոբյան Ա.,Եփրեմյան Ա.,Պետրոսյան Ռ. «Խոսքի զարգացում» Ծրագիր ձեռնարկ լսողության խանգարում ունեցող երեխաների I-IV դասարանների համար,Երևան, 2008:

5.Հ. Ջոունզ, «Հատուկ կարիքներով երեխաների իրավունքները»: Գործնական հանձնարարական: էջ44 «Փրկեք երեխաներին» հիմնադրամ (Ստոկհոլմ, Շվեդիա), 2001:

6.Ներառական կրթության իրականացման ուղեցույց, (Հանրակրթական հաստատությունների մանկավարժական աշխատողների համար): Հրատարակչություն Ե.: ՀՀ ԿԳՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ 2008:

7.Մանուկյան Վ. «Լսողության խանգարում ունեցող երեխաների հետ տարվող սուրդոմանկավարժական աշխատանքները»,Երևան,2008:

8.www.krt.org

9.www.edu.am.

10www.inclusiveschools.org

11. www.kidstogether.org

12.www.school62.safe.am

13.www.irazekum.org

14.www.disabilityinfo.am

15.www.e-gov.am

16.www.school100.safe.am

17.www.aniedu.am

18. www.bridgeofhope.am

19.www.wvarmenia.am